С применением различных методов синтеза на базе 2-фенил-4-(4-толуолсульфонилоксибензилиден)-5(4H)-оксазолонa получены различные алкил- и ариламиды, а также пептиды N-бензоил- α,β -дегидро-О-толуолсульфонилтирозина. Полученные соединения взаимодействием с гексаметилдисилазаном (ГМДС) или триметилхлорсиланом превращены в соответствующие (Z)-1-замещенные-2-фенил-4-(п-толуолсульфонилоксибензилиден)-5-имидазолонa. В некоторых случаях 5-имидазолонa получены с применением ГМДС из ненасыщенного 5(4H)-оксазолонa осуществлением синтеза «в одной колбе». Изучены антихолинэстеразные свойства синтезированных соединений по отношению как к ацетилхолинэстеразе (АХЭ), так и к бутирилхолинэстеразе (БухЭ). Установлено, что по ингибирующим свойствам по отношению к обоим ферментам амиды и пептиды N-бензоил- α,β -дегидро-О-толуолсульфонилтирозина уступают соответствующим 5-имидазолонaм. На основании полученных данных установлено также, что синтезированные соединения в основном проявляют специфичность по отношению к БухЭ.

**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վ. Օ. Թոփուզյան, Ա. Ա. Հովհաննիսյան,
Վ. Մ. Դազոյան, Ե. Ռ. Ալեքսանյան**

(Z)-1-(տեղակալված-2-ֆենիլ-4-(պ-տոլուոլսուլֆոնիլօքսիբենզիլիդեն)-5-իմիդազոլոնների սինթեզը և հակախոլինէսթերազային հատկությունները

2-ֆենիլ-4-(4-տոլուոլսուլֆոնիլօքսիբենզիլիդեն)-5(4H)-օքսազոլոնի հիմքի վրա սինթեզի տարբեր մեթոդների կիրառմամբ ստացված են N-բենզոիլ- α,β -դեհիդրո-Օ-տոլուոլսուլֆոնիլթիրոզինի տարբեր ալկիլ- և արիլամիդներ և պեպտիդներ: Ստացված միացությունները հեքսամեթիլդիսիլազանի (ՀՄԴՍ) և եռմեթիլքլորսիլանի հետ փոխազդեցությամբ վերածվել են համապատասխան (Z)-1-(տեղակալված-2-ֆենիլ-4-(պ-տոլուոլսուլֆոնիլօքսիբենզիլիդեն)-5-իմիդազոլոնների: Որոշ դեպքերում 5-իմիդազոլոնները ստացված են ՀՄԴՍ-ի կիրառմամբ չհագեցած 5(4H)-օքսազոլոնից՝ «մեկ կոլբայում» ռեակցիայի իրականացմամբ: Ուսումնասիրված են սինթեզված միացությունների հակախոլինէսթերազային հատկությունները ինչպես ացեթիլխոլինէսթերազի (ԱԽԷ), այնպես էլ բուրիլիլխոլինէսթերազի (ԲուԽԷ) հանդեպ: Ցույց է տրված, որ երկու ֆերմենտի նկատմամբ էլ արգելակող հատկություններով ամիդներն ու պեպտիդները զիջում են համապատասխան 5-իմիդազոլոններին: Ստացված տվյալների հիման վրա նաև ցույց է տրված, որ սինթեզված միացությունները հիմնականում ցուցաբերում են ընտրողականություն ԲուԽԷ-ի նկատմամբ:

**Corresponding member of NAS RA V. O. Topuzyan, A. A. Hovhannisyan,
V. M. Ghazoyan, E. R. Alexanyan**

Synthesis and Anticholinesterase Properties of (Z)-1-substituted-2-phenyl-4-(p-toluolsulphoniloxibenzilidene)-5-imidazolones

There were received various alkyl- and arylamides and peptides of N-benzoil- α,β -dehydro-O-toluolsulfonyltyrosine with the application of the methods of synthesis on the base of 2-phenyl-4-(4-toluolsulfonyloxibenziliden)-5(4H)-oxazolone. Received compounds with the interaction of the hexametyldisilazane (HMDS) and thrimethylchlorosilane (TMCS) were converted to the corresponding (Z)-1-substituted-2-phenyl-4-(p-toluolsulphoniloxibenzilidene)-5-imidazolones. In some cases 5-imidazolones were received from 5(4H)-oxazolone with application HMDS by «one pot» synthesis. There were studied anticholinesterase properties of synthesized compounds in relase to acetylcholinesterase (AChE) and butyrylcholinesterase (BuChE). There was established, that by the inhibition properties in relase to the both of ferments amides and peptides of N-benzoil- α,β -dehydro-O-toluolsulfoniltirosine concede to the corresponding 5-imidazolones. According to the received data there was also established, that synthesized compounds basically show specificity to the BuChE.

Литература

1. Shah R. A., Patel P. S., Trivedi D. K., Vyas P. J. – Der Pharma Chemica. 2010. V. 2. № 1. P. 117-120.
2. Solankee A., Patel R. – Archives of Applied Research. 2013. V. 5. P. 287-290.
3. Mohamed M. S., Mahmoud R. K., Sayed A. I., El-Araby M. E. – Open Journal of Medicinal Chemistry. 2012. V. 2: P. 24-29.
4. El-Araby M., Omar A., Hassanein H.H., El-Helby A-Gh. H., Abdel-Rahman A. A. – Molecules. 2012. V. 17. P. 12262-12275.
5. Ajeesh Kumar A. K., Bodke Y. D., Gowda A. N., Sambasivam G., Bhat K. G. – J. Heterocyclic Chem. 2017. V. 54. № 12. P. 1904-1924.
6. Abdellatif Kh. R. A., Fadaly W. A. A. – Bioorganic Chemistry. 2017. V. 72. P. 123-129.
7. Lamie Ph. F., Philoppes J. N., Rarova L. – Arch Pharm. 2018. V. 351. P. 1.
8. Топузян В. О., Казоян В. М. – Доклады НАН Армени. 2018. Т. 118. № 3. С. 268-272.
9. Смирнова А. В., Рамиш С. М., Раннуг У. В кн.: Первая Российская конференция по медицинской химии (MedChemRussia-2013) с международным участием. 8-12 сентября 2013. Тезисы докладов. М. 2013. С. 143.
10. Топузян В. О., Несунц Н. С., Акопян А. З., Дургарян Л. К. и др. – Хим.-фарм. ж. 1992. Т. 26. С. 31-34.
11. Топузян В. О., Казоян В. М., Тамазян Р. А., Айвазян А. Г., Галстян Л. Х. – ЖорХ. 2018. Т. 54. № 9. С. 1355-1363.
12. Ellman G. L., Courtney K. D., Andres V., Featherstone R. M. – Biochem. Pharm. 1961. V. 7. № 2. P. 88-90.
13. Топузян В. О., Халатян М. М., Оганесян А. А., Галстян Л. Х., Манвелян А. Р. – Хим. ж. Армени. 2017. Т. 70. № 3. С. 357-367.
14. Luo W., Yu Q.-sh., Kulkarni S. S. et al. – J. Med. Chem. 2006. V. 49. № 7. P. 2174-2185.

ФИЗИОЛОГИЯ

УДК 612.73+612.468

Т. А. Пилипосян

Автономность спонтанной активности овариальной зоны маточной трубы у крыс

(Представлено чл.-кор. НАН РА Л. Р. Манвеляном 20/III 2019)

Ключевые слова: *маточная труба, овариальный отдел, спонтанная активность, вспышки активности, потенциал действия.*

Электрическая активность гладкомышечной ткани представлена в виде периодических, локально возникающих потенциалов действия, обеспечивающих основную функциональную деятельность миометрия – контрактуру [1, 2]. После каждой контрактуры следует релаксация, и данное их чередование обуславливает возникновение перемежающихся относительно спокойным уровнем мембранного потенциала медленных колебаний, на вершине которых и наблюдаются вспышки активности [3, 4]. Подобный ритмогенез находится в определенных областях миометрия и наблюдается как у беременных, так и небеременных самок.

У небеременных крыс эти разряды менее продолжительны и имеют более редкую частоту [5, 6, 7]. Поскольку каждая гладкомышечная клетка миометрия способна к пейсмейкерной активности, та клетка, возбудимость которой является самой высокой, будет способна генерировать потенциал действия [2, 8, 9]. В связи с сопряжением электрической активности с контрактурой подобный лабильный ритмогенез пейсмейкеров миометрия может создать картину функционального хаоса [3, 7]. Вместе с тем известно также, что основное функциональное значение такого репродуктивного органа, как матка, заключается в обеспечении однополярно направленной контрактурной деятельности. В таком случае необходимо наличие в миометрии определенной активной зоны, выполняющей роль водителя ритма в этом процессе. Данный факт, вероятно, определяется именно локализацией специфических пейсмейкеров [10].

В ряде исследований показано, что матка характеризуется особым реагированием на такой медиатор, как окситоцин. Возбуждающее

действие данного гипофизарного гормона проявляется учащением спонтанных разрядов и деполяризацией мембраны гладкомышечных клеток, а также увеличением продолжительности активного состояния [11 - 13].

Исходя из вышесказанного, а также наличия определенной специфической локализации (проксимальная зона) овариальной области маточной трубы целью данной работы являлось проведение сравнительного анализа характеристик спонтанной активности отмеченной области как в норме, так и при ее изоляции при воздействии окситоцина.

Материал и методика. Работа выполнена в условиях *in situ* на самках крыс, взятых на 10-й день после родов, массой 200-250 г. Животные анестезировались нембуталом (40-45 мг/кг) внутривентрально. Эксперименты были острыми, и после завершения регистрации животные забивались. Вскрывалась брюшная полость и обнажался корпус матки с расположенными с двух сторон маточными трубами. Матка денервировалась перерезкой корешков нервов *plexus hypogastricus, uterinus, uterovaginalis*. Регистрация активности проводилась с поверхности овариального отдела матки (рис. 1). Спонтанная электрическая активность из описанного отдела органа отводилась биполярным электродом (межэлектродное расстояние соответствовало 2 мм). Исключение взаимосвязи между ритмогенными областями осуществлялось путем перерезки маточного рога в соответствующей области (рис. 1). Окситоцин (5МЕ Гедеон Рихтер) вводился внутривенно по 0.2-0.3 мл (в зависимости от веса животного) в концентрации 10^{-1} мг/кг. В каждом эксперименте исследовалась одна концентрация.




Рис.1. А. Схематическое изображение тела матки и маточной трубы крысы: 1 – область регистрации, I – место перерезки; Б. Спонтанная электрическая активность овариальной области; В. Единичная усредненная форма потенциала действия.

Анализ результатов проводился путем определения значений следующих параметров спонтанных потенциалов действия: амплитуда (А), средняя скорость нарастания пика (V), продолжительность нарастания пика (T/2) (продолжительность увеличения амплитуды потенциала действия до максимального значения), половина ширины (t) (продолжительность формирования вершины потенциала действия, соответствующей верхней половине его амплитуды), продолжительность активного состояния (сум-

мированные длительности вспышек активности, наблюдаемые в течение 5 мин регистрации в пересчете на 1 мин). Все отмеченные показатели определялись путем их усреднения как в пределе одного эксперимента, так и всех экспериментов данной серии. На рисунках представлены суперпозиции двух типичных форм усредненных потенциалов действия. Усреднение последних также проводилось в пределах как каждого эксперимента, так и всех экспериментов данной серии.

Спонтанная электрическая активность регистрировалась на 6-канальном приборе для оценки электрической активности гладкой мускулатуры, разработанном в Институте физиологии им. Л. А. Орбели НАН РА [14]. В данных экспериментах проводилась регистрация с одного локуса исследуемой структуры. Отношение сигнал - шум прибора позволяет осуществлять достоверную регистрацию отклонений сигналов с амплитудой до 10 мкВ. Проводилась полосовая фильтрация регистрируемых сигналов в диапазоне 3 – 30 Гц. Коммуникация прибора с ЭВМ осуществлялась с использованием USB порта. Программа, обеспечивающая регистрацию сигналов, разработана с применением пакета программ Lab View. Последующий статистический анализ зарегистрированных сигналов проводился с использованием пакетов программ Origin-8.5 и Sigma Plot 11.0. Оценка достоверности изменения полученных данных осуществлялась согласно t-критерию Стьюдента. Приведенные записи отдельных экспериментов представляют картину активности одного из аналогичных экспериментов, полученных на 19 животных.

Все эксперименты были проведены в соответствии с правилами Ереванского государственного медицинского университета по этике в области ухода и использования лабораторных животных. Эксперименты, а также уход за животными выполнены в соответствии с «Правилами и нормами гуманного обращения с объектами исследования».

Результаты исследований и их обсуждение. Проводилась регистрация электрической активности из овариальной ритмогенной зоны миометрии, представленной на рис. 1, А. Регистрируемый автоматизм представлен периодически, асинхронно возникающими вспышками разрядов потенциала действия, частота которых постепенно урежалась, и активность исчезала (рис. 1, Б, В). Исключение воздействия активности более дистально расположенных зон миометрии на исследуемый нами локус органа проводилось после его изоляции путем перерезки маточной трубы в овариальной области, представленной на рис. 1. После столь резкой травмы стабилизация активности устанавливалась через 5 мин.

На рис. 2 слева представлены результаты проведенного анализа характеристик электрической активности овариальной зоны миометрии после перерезки. Для наглядности все результаты анализировались в процентном отношении к норме. В основном выявилось лишь уменьшение амплитуды и средней скорости нарастания пика для овариальной зоны миометрии. На рис. 2 справа наложенные друг на друга в развернутом виде типичные формы потенциалов действия в норме и после перерезки

(штриховой контур) овариальной области свидетельствуют об отмеченных выше изменениях параметров потенциалов действия.




Рис. 2. Влияние перерезки маточного рога на спонтанную электрическую активность овариальной области (рис. 1): А. Процентное соотношение показателей потенциалов действия по отношению к норме. Штриховой линией показана норма, * $p \leq 0.05$; Б. Наложение друг на друга усредненных форм потенциалов действия овариальной зоны в норме и после перерезки; В. Аналогично «Б» для цервикальной зоны; Г. Аналогично «Б» для тела матки, $n=19$.

Воздействие окситоцина как фактора, способствующего увеличению возбудимости данной зоны миометрия, регистрировалось как в норме, так и после ее изоляции. При нормальных условиях введение в вену наиболее оптимальной дозы окситоцина для возбуждения миометрия крысы (0.1 мкг/кг) способствует значительному увеличению величины амплитуды потенциалов действия и средней скорости нарастания пика ($148.63 \pm 6.1\%$, $p \leq 0.001$; $141.03 \pm 7.6\%$, $p \leq 0.01$, рис. 3, А). Штриховой линией показана норма, которая соответствует 100%. Наложение друг на друга типичных форм ПД овариальной области в норме и при воздействии окситоцина (рис. 3 справа) свидетельствует о приведенных изменениях параметров ПД (норме соответствует сплошной контур). При воздействии той же дозы окситоцина в условиях изоляции овариального локуса (рис. 3, В) наблюдалось возрастание амплитуды ПД и средней скорости нарастания пика по отношению к норме (принимаются условия после перерезки): $134.86 \pm 2.5\%$, $p \leq 0.05$; $139.49 \pm 4.5\%$; $p \leq 0.001$.

Несмотря на то, что овариальная область была полностью изолирована от остальных ритмогенных зон и травмирована перерезкой, при воздействии окситоцина активность, несколько ингибированная, почти восстанавливалась до исходного значения, наблюдаемого для нетронутой ткани. В этих условиях возрастала также и продолжительность активного состояния. Продолжительность активного состояния в условиях после перерезки ($123.8 \pm 7.3\%$; $p \leq 0.05$) была на незначительную величину короче зна-




Рис. 3. Влияние окситоцина на спонтанную электрическую активность овариальной области до и после перерезки. (рис. 1): А. Процентное соотношение показателей активности после введения окситоцина по отношению к норме. Штриховой линией показана норма, * $p \leq 0.05$, ** $p \leq 0.01$, *** $p \leq 0.001$; Б. Наложение друг на друга усредненных форм потенциалов действия овариальной области в норме и при воздействии окситоцина; В. Процентное соотношение показателей активности по отношению к норме (принимаются условия после перерезки). Штриховой линией показана норма, * $p \leq 0.05$, ** $p \leq 0.01$, *** $p \leq 0.001$; Г. Наложение друг на друга усредненных форм потенциалов действия овариальной зоны в норме и при воздействии окситоцина, $n=19$.

чения того же параметра в условиях до изоляции ($134.86 \pm 2.5\%$, $p \leq 0.05$; $139.49 \pm 4.5\%$, $p \leq 0.001$). Имея в виду также полученные нами ранее результаты по изучению характеристик более дистально расположенных активных локусов миометрия, можно заключить о наличии как автономности, так и некоторых особенностей характера спонтанного ритмогенеза овариальной области рога.

Таким образом, приведенные выше результаты показывают, что при воздействии окситоцина на интактную ткань изменения спонтанной активности проявляются значительным увеличением амплитуды потенциала

действия с соответствующим возрастанием средней скорости нарастания пика и продолжительности активного состояния.

Институт физиологии им. Л. Орбели НАН РА

Т. А. Пилипосян

Автономность спонтанной активности овариальной зоны маточной трубы у крыс

Изучена автономность спонтанной электрической активности овариальной зоны маточной трубы небеременной крысы как в норме, так и в условиях перерезки овариального локуса. Воздействие окситоцина как фактора, выявляющего автономность овариального локуса, исследовалась при вышеописанных двух экспериментальных условиях. Введение в вену 0.1 мкг/кг окситоцина в норме способствует значительному увеличению величин амплитуды и средней скорости нарастания пика для овариальной зоны на $148.63 \pm 6.1\%$, $p \leq 0.001$; $141.03 \pm 7.6\%$, $p \leq 0.01$. Имеет место также аналогичное возрастание и продолжительности активного состояния на $132.7 \pm 4.5\%$, $p \leq 0.05$. При воздействии же окситоцина после перерезки рога показатели активности изменились на несколько меньшие величины: $134.86 \pm 2.5\%$, $p \leq 0.05$; $139.49 \pm 4.5\%$, $p \leq 0.001$ и $123.8 \pm 7.3\%$, $p \leq 0.05$. Полученные результаты могут свидетельствовать как об автономности овариального локуса, так и о наличии определенных отличий в свойствах параметров ритмогенеза от таковых других активных областей миометрии.

Տ. Ա. Փիլիպոսյան

Առնետի արգանդի փողի ձվարանային շրջանի ինքնաբերական ակտիվության ինքնավարությունը

Հետազոտվել է ոչ հղի առնետի արգանդի փողի ձվարանային շրջանի ինքնաբերական էլեկտրական ակտիվության ինքնավարությունը ինչպես նորմայում, այնպես էլ ձվարանային շրջանի հատման պայմաններում: Օքսիտոցինի ազդեցությունը՝ որպես ձվարանային շրջանի ինքնավարությունը բացահայտող գործոն, հետազոտվել է վերևում նշված այդ երկու փորձարարական պայմաններում: Նորմայում օքսիտոցինի 0.1 մկգ/կգ կոնցենտրացիայի ներերակային ներարկումը խթանում է ձվարանային շրջանի ամպլիտուդայի և պիկի աճման միջին արագության զգալի աճը՝ $148.3 \pm 6.1\%$, $p \leq 0.001$; $141.03 \pm 7.6\%$, $p \leq 0.01$: Այդ պայմաններում ակտիվ վիճակի տևողությունը նաև աճում է՝ համապատասխանաբար դառնալով $132.7 \pm 4.5\%$, $p \leq 0.05$: Օվարյան շրջանի հատումից հետո օքսիտոցինի ազդեցությունը ակտիվության ցուցանիշների վրա ավելի փոքր էր՝ $134.86 \pm 2.5\%$, $p \leq 0.05$; $139.49 \pm 4.5\%$, $p \leq 0.001$ և $123.8 \pm 7.3\%$, $p \leq 0.05$: Ստացված տվյալները կարող են փաստել ինչպես ձվարանային շրջանի ինքնավարության, այնպես էլ ռիթմաձևության ցուցանիշների տարբերության մասին արգանդամկանի մյուս ռիթմավար շրջանների ցուցանիշներից:

T. A. Piliposyan

**The Autonomy of Spontaneous Activity of the Ovarian
Horn Area in Rats**

Autonomy of spontaneous electrical activity of the ovarian horn area was studied in non-pregnant rats both in norm and after transection of the ovarian locus. The effect of oxytocin was also investigated in both above mentioned experimental conditions. By the help of this factor the autonomy of ovarian loci was revealed. In norm, venous administration of oxytocin in 0.1 µg/kg concentration promotes a significant increase in peak amplitude up to $148.63 \pm 6.1\%$, $p \leq 0.001$, and rate of rise is elevated up to $141.03 \pm 7.6\%$, $p \leq 0.01$, in the ovarian horn area. Under these conditions a similar increase up to $132.7 \pm 4.5\%$, $p \leq 0.05$ is observed in the value of active state duration. Following transection of the uterine horn, oxytocin administration slightly changed the values of activity indicators to $134.86 \pm 2.5\%$, $p \leq 0.05$; $139.49 \pm 4.5\%$, $p \leq 0.001$ and $123.8 \pm 7\%$, $p \leq 0.05$. The obtained results may evidence about both the autonomy of the ovarian locus and the presence of certain differences in the parameters of rhythmo-genesis of given area comparing to the other active regions of the myometrium.

Литература

1. *Buhimschi C., Boyle M. B., Garfield R. E.* – Obstet. Gynecol. 1997. V. 90. № 1. P. 102-111.
2. *Marshall J. M.* – Physiol. Rev. Suppl. 1962. V. 5. P. 213-227.
3. *Maul H., Maner W. L., Saade G. R., Garfield R. E.* – Clin. Perinatol. 2003. V. 30. P. 665-676.
4. *Osa T., Fujino T.* – Jpn. J. Physiol. 1978. V. 23. P. 197-209.
5. *Казарян К. В., Унанян Н. Г., Акопян Р. Р.* – Рос. физиол. журн. им. И.М.Сеченова. 2010. Т. 96(10). С. 981-987.
6. *Buhimschi C. S., Saade G. R., Buhimschi I. A., Gokdeniz R., Boyle M. B., Garfield R. E.* – Am. J. Obstet. Gynecol. 2000. V. 183. № 1. P. 68-75.
7. *Garfield R. E., Maner W. L.* – Semin. Cell. Dev. Biol. 2007. V. 18. № 3. P. 289-295.
8. *Bulletti C., Prefetto R. A., Bazzocchi G., Romero R., Mimmi P., Polli V., Lanfranchi G. A., Labate A. M. M., Flamigni C.* – Hum. Reprod. 1993. V. 8. № 10. P. 1558-1563.
9. *Santicioli P., Maggi C. A.* – Pharmacol. Rev. 1998. V. 50. № 4. P. 683-722.
10. *Porter D. G.* In: The uterus. By Finn C. A., Porter D. G. London. Elek. 1975. P. 133-238.
11. *Edwards D., Good D. M., Granger S. E., Hollingsworth M., Robson A., Small R. C., Weston A. H.* – Br. J. Pharmacol. 1986. V. 88. № 4. P. 899-908.
12. *Kazaryan K. V., Hunanyan N. G., Meliksetyan I. B., Hakobyan R. R., Savayan A. A.* – Russian Journal of Evolutionary Biochemistry and Physiology. 2011. V. 47. № 3. P. 284-291.
13. *Osa T., Taga F.* – Jpn. J. Physiol. 1973. V. 23(1). P. 81-96.
14. *Казарян К. В., Унанян Н. Г.* – Рос. физиол. журн. им. И.М. Сеченова. 2013. Т. 99(10). С. 1191-1199.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՏԴ 336

Գ. Ա. Դանիելյան


**ՀՀ հյուրընկալության ոլորտում ֆինանսական
հաշվառման միասնական համակարգ ունենալու
նախադրյալները**

(Ներկայացված է ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանի կողմից 17/V 2019)

Բանալի բառեր՝ *հյուրընկալության ոլորտ, հյուրանոցային տնտեսություն, ֆինանսական վերահսկողություն, հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգ, հաշվապահական հաշվառում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ:*


Ժամանակակից աշխարհի ինտեգրացման և գլոբալացման միտումներն անխուսափելիորեն հանգեցնում են երկրների միջև մարդկանց հոսքի ավելացմանը, ինչն էլ բարելավում է հյուրընկալության ոլորտի զարգացման նախապայմանները: Մա իր հերթին նշանակում է, որ հյուրընկալության ոլորտի մյուս բոլոր օբյեկտներին զուգահեռ՝ զարգացում է ապրում նաև հյուրանոցային բիզնեսը: Համաշխարհային տուրիստական կազմակերպության տվյալներով ներկայումս աշխարհում գործում են 16 միլիոնից ավելի հյուրանոցներ, որոնց մոտ 20%-ը հյուրանոցային ցանցերն են¹: Ինչ վերաբերում է Հայաստանին, այստեղ, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալների, 2017 թվականին գործում էր 556 հյուրանոցային օբյեկտ, ինչը շուրջ 36%-ով ավելի շատ է, քան 2014 թվականին:

Վերջին 4 տարիների ընթացքում հյուրանոցային օբյեկտների թիվը ՀՀ տարածքում աճել է միջինում տարեկան մոտ 12%-ով: Այդուհանդերձ, մինչ օրս միջազգային ցանցերի պատկանող հյուրանոցների թիվը ՀՀ-ում չի անցնում մեկ տասնյակից:



Նկար 1. Հյուրանոցային տնտեսությունների թիվը ՀՀ-ում²

Հյուրանոցների քանակին զուգահեռ բնականաբար աճում են նաև դրանց շրջանառության ծավալները: Այս ցուցանիշի վերջին տարիների դինամիկան պատկերավոր դարձնելու համար այն ներկայացնենք ստորև բերվող գրաֆիկով:



Նկար 2. Հյուրանոցների շրջանառությունը կացության կազմակերպումից ստացված եկամուտներից (1,000 ՀՀ դրամ)³

Ինչպես երևում է գրաֆիկից, հետճգնաժամային տարիներից ՀՀ-ում կացության կազմակերպումից ստացվող եկամուտները հյուրա-

նոցներում գրանցում են միայն աճի միտում: Մասնավորապես 2018 թվականին այդ շրջանառությունը կազմել է շուրջ 34,5 միլիարդ դրամ, ինչը գրեթե 3 անգամ ավելի է, քան դրանից 7 տարի առաջ: Կարելի է նկատել նաև, որ վերջին 2 տարիներին աճի տեմպն էլ ավելի է մեծացել՝ գերազանցելով տարեկան 20%-ը:

Համոզվելով հյուրընկալության ոլորտում և մասնավորապես հյուրանոցային շուկայում տիրող տնտեսական ակտիվության մեջ՝ կարող ենք պնդել, որ ոլորտի կարգավորումները բարելավելն արդիական հիմնախնդիր է, քանի որ զարգացող ճյուղը կարիք ունի կայուն և բազմափորձ հենասյուների: Բացի դրանից, շրջանառության ծավալների նմանատիպ աճը միանշանակ կգրավի շահագրգիռ անձանց ուշադրությունը՝ նոր ներդրումներ կատարելու համար: Համապատասխանաբար կարիք կլինի մեծացնել նաև պետական ներգրավվածությունը ոլորտի մի շարք հարցերում, որոնց թվում են նաև առանձնահատուկ ֆինանսական վերահսկողություն և հարկային քաղաքականություն իրականացնելու հնարավորությունները: Այս պատճառով էլ կարելի է գնահատել, որ ոլորտի բոլոր մանրուքները հաշվի առնող և հուսալի ֆինանսական համակարգի ներդրման առաջարկը կարող է հետաքրքրական հնչել հյուրանոցային շուկայի բուռն զարգացման շրջանում:

Այսպիսով, հյուրանոցային ոլորտի հայկական շուկան ժամանակի հրամայականով պահանջում է թե՛ քանակական և թե՛ որակական աճ: Վերջինս կարող է արձանագրվել միջազգային լավագույն փորձի կիրառման արդյունքում: Խոսքը ոչ միայն միջազգային ցանցի հյուրանոցներ բացելու, այլև արդեն իսկ գործող հյուրանոցներում միջազգային արդյունավետ ստանդարտների ներդրման մասին է:

Ընդ որում նշված ստանդարտները վերաբերում են հյուրանոցային օբյեկտի ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական կառավարմանը: Ցանկացած այլ ոլորտի բիզնեսի նման հյուրանոցում նույնպես արդյունավետությունն ու զարգացումը մեծապես պայմանավորված են նաև ֆինանսների արդյունավետ կառավարմամբ: Ուստի ոլորտի առաջընթացը ենթադրում է նաև ոլորտում ֆինանսական կառավարման և վերահսկողության համակարգի ստեղծում և կատարելագործում: Այս համատեքստում փորձենք ուսումնասիրել հյուրանոցային տնտեսություններում ֆինանսական կառավարման և վերահսկողության միջազգային փորձն ու դիտարկել դրանք ՀՀ-ում գործող հյուրանոցներում կիրառելու հնարավորությունները:

Հյուրանոցային ոլորտում ֆինանսական կառավարման և վերահսկողության իրականացումը հիմնականում կողմնորոշված է եվրոպական և ամերիկյան ստանդարտների ուղղությամբ: Մակայն այս ոլորտի համար իսկական դրոշակակիր է ամերիկյան հյուրանոցային

տնտեսություններում կիրառվող ֆինանսական կառավարման և վե-
րահսկողության ամենաարդյունավետ փորձը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1920-ական թվա-
կաններին՝ ԱՄՆ-ի տնտեսության զարթոնքի փուլում, հյուրընկալու-
թյան ոլորտը վերելք ապրեց, ինչն էլ շարժառիթ հանդիսացավ տվյալ
ոլորտի ֆինանսական և հաշվապահական մասնագետների համար՝
սահմանելու հաշվապահական հաշվառման իրականացման համընդ-
հանուր ուղեցույցների շարք, որը հայտնի է որպես Հյուրանոցային
ոլորտի համար հաշիվների միասնական համակարգ (Uniform System
of Accounts for the Lodging Industry - USALI):

Հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համա-
կարգը ստեղծվել և առաջին անգամ կիրառվել է 1926թ. ԱՄՆ-ում: Հա-
մակարգի առաջին հրատարակության տպագրությունից հետո ձևա-
վորվեց ձեռնարկի հանձնախումբը, որի միջնորդությամբ էլ շարու-
նակվեցին բուն աշխատանքները: Նյու Յորքի հյուրանոցային հաշվա-
պահների ասոցիացիայի (Hotel Accountants Association of New York
City) կողմից հիմնադրվեց այժմ հայտնի Հյուրընկալության ֆինան-
սական և տեխնոլոգիական միավորում (Hospitality Financial and Tech-
nology Professionals - HFTP) կազմակերպությունը, որը կարգավորում
էր ասոցիացիաների մասնակցությունը միասնական համակարգի
նախկին հրատարակությունների փոփոխման աշխատանքներին: 1961
թվականին Հյուրանոցների ու հյուրընկալության ամերիկյան ասոցիա-
ցիան (American Hotel & Lodging Association - AH&LA) իր անդամների
պահանջով Հաշվապահների ազգային ասոցիացիային (National Asso-
ciation of Accountants) նշանակեց փոքր հյուրանոցների և մոթելների
հաշիվների միասնական համակարգի ստեղծման և զարգացման պա-
տասխանատու: Սակայն 1996 թվականին որոշում ընդունվեց միաս-
նական համակարգի երկու ուղղությունները վերամիավորել հյուրա-
նոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգ անվան
տակ⁴: Այդ ժամանակ Հյուրանոցների ու հյուրընկալության ամերիկյան
ասոցիացիայի ֆինանսական կառավարման խորհուրդը Նյու Յորքի
հյուրանոցային հաշվապահների ասոցիացիայի և հյուրընկալության
ֆինանսական և տեխնոլոգիական միավորման հետ մեկտեղ սկսեց
ձեռնարկի նոր հրատարակության աշխատանքները:

Այս համակարգը ներկայումս զարգանում և կատարելագործվում է
հյուրընկալության ֆինանսական և տեխնոլոգիական միավորման
(HFTP) և հյուրանոցների ու հյուրընկալության ամերիկյան ասոցիա-
ցիայի կրթական ինստիտուտի (Educational Institute - EI of AH&LA)
կողմից: Հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական հա-
մակարգը, գոյությունը պահպանելով ավելի քան 90 տարի, փորձված և

արդարացված է նաև ժամանակով: Այն փաստը, որ համակարգն ունեցել է տասնմեկ իրար հաջորդող խմբագրական խորհուրդներ, որոնց շարքերում են բազմաթիվ բարձրորակ մասնագետներ, կառավարչական ընկերություններ, սեփականատերեր և հաշվապահներ, անհերքելի է դարձնում, որ համակարգը հիմնովին մշակվել և կերտվել է՝ հյուրանոցային տնտեսությանը կատարելապես ծառայելու համար:

Հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի հիմնական սկզբունքն այն է, որ արդյունքներն արտահայտվում են ըստ բաժինների՝ պատասխանատվության կենտրոնների հիման վրա: Վերջիններս կարող են ներկայացվել թե՛ որպես եկամտի և թե՛ որպես ծախսային կենտրոններ: Այսինքն՝ ըստ այս համակարգի՝ ամբողջ հյուրանոցը բաժանվում է բաժինների, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու է իր բլոկի եկամտի ու ծախսի համար: Որոշ հյուրանոցներում կարող են որոշ պատասխանատվության կենտրոններին համապատասխան առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ բացակայել, սակայն, անկախ այս հանգամանքից, պատասխանատվության կենտրոններն առանձնացվում են ըստ համակարգի:

Հյուրանոցային ոլորտի համար տվյալ միասնական համակարգի ստեղծումն ու ներգրավումը կենսական նշանակություն ունեին բազմաթիվ պատճառներով: Առաջին հերթին հանդիսանալով համընդհանուր միասնական ուղեցույց ոլորտի բոլոր ներկայացուցիչների համար՝ այն ապահովում է տարբեր ընկերությունների միջև համադրելիությունը, համեմատականներ և զուգահեռներ անցկացնելու հնարավորությունը: Համակարգի լիակատար ներկայացվածության շնորհիվ հնարավոր է դառնում նրա՝ որպես ամբողջական կիրառությունը հյուրընկալության ոլորտի բոլոր օբյեկտների կողմից: Միասնական համակարգի պատշաճ ներգրավումը օգտագործողների կողմից լծակ է՝ համեմատելու մեկ օբյեկտի ֆինանսական արդյունքները մյուսի հետ:

Համադրելիության հետ զուգահեռ առաջ է գալիս նաև թափանցիկությունը: Շնորհիվ մեկ միասնական ուղեցույցի՝ բազմաթիվ վրիպումներ և հաշվետվությունների ներկայացման ոչ ցանկալի մեթոդներ վերանում են, ինչն էլ ապահովում է հաշվապահության թափանցիկությունը բոլոր կողմերի համար: Այդ թվում համակարգի միասնականությունն ապահովում է նաև հաշվետվությունների լիակատար հասանելիությունը հնարավոր ներդրողներին ու հաճախորդներին: Հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի հիմքում դրված են ֆինանսական հաշվետվությունների հիմնական ձևերից երեքը:

- հաշվապահական հաշվեկշիռը,
- եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը,
- դրամական հոսքերի մասին հաշվետվությունը:

Միասնական համակարգը ուղեցույց է ոչ միայն ֆինանսական և հաշվապահական մասնագետների, այլ նաև կառավարիչների, սեփականատերերի, ձեռնարկատերերի և հաշվապահական տեղեկատվության բոլոր ներքին և արտաքին օգտագործողների համար: Համակարգն արդյունավետ գործիք է ֆինանսական և հաշվապահական մասնագետների համար՝ ներկայացնելու հյուրանոցի ֆինանսական գործառնությունները մեկ ընդհանուր եղանակով: Եթե հյուրանոցի սեփականատերն ունի մի քանի հյուրանոցներ՝ աշխարհի տարբեր ծայրերում գտնվող և տարբեր ֆինանսական մասնագետներով, ապա մեկ միասնական համակարգի բացակայությունը կհանգեցնի հյուրանոցների շահութաբերության վերաբերյալ տեղեկատվության խեղաթյուրմանն ու անհավաստիությանը:

Հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի վերաբերյալ իրենց կարծիքն են հայտնել նաև մի շարք անկախ փորձագետներ, որոնց թվում՝ Օ'Քոննորս Դեյվիս խորհրդատվական ընկերության ավագ մասնագետ Ռոնալդ Մարտինեսը: Ըստ նրա՝ միասնական համակարգն ապահովում է հաշվետվության բաղադրիչների ներկայացումը մեկ ընդհանուր եղանակով և սկզբունքներով, ինչն էլ ստույգ տեղեկատվության երաշխիք է տարբեր տնտեսվարող միավորներ համեմատելիս⁵:

Միջիգանի պետական համալսարանի և Հիլթոնի հյուրանոցների պրոֆեսոր Ռայմոնդ Շմիդգալն էլ իր աշխատությունում⁶ նշում է, որ հաշիվների այս միասնական համակարգը ժամանակով փորձված, պատրաստի օգտակար մոդել է, որը հեշտորեն ներգրավելի է տարբեր մասշտաբների գործառնությունների իրականացման ժամանակ: Այն ներառում է Համընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքների (Generally Accepted Accounting Principles - GAAP) անբաժանելի բաղադրիչները՝ կայունություն, անաչառություն, արժանահավատություն, ճշգրտություն, և արտացոլում է անթերի կատարված հաշվապահական հաշվառումը:

Այս ամենի արդյունքում առաջ է քաշվում այս հոդվածի՝ մեզ համար գլխավոր հարցը: Ինչպիսի կիրառություն ունի USALI-ն ՀՀ տարածքում գործող հյուրանոցներում: Արդյո՞ք մեր տեղական հյուրընկալության ոլորտին անհրաժեշտ է հաշիվների միասնական համակարգի ներդրումը և եթե այո, հետագա ի՞նչ քայլերով է պետք այն մտցնել կիրառության:

Նախ՝ նշենք, որ չնայած այն հանգամանքին, որ USALI-ն լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում՝ շնորհիվ իր կիրառելիության լայնության, Հայաստանում գործող հյուրանոցների ֆինանսական կառավարման որևէ հստակ միասնական համակարգ մինչ օրս գոյություն չունի: Ներկայումս յուրաքանչյուր հյուրանոց, կախված այն հանգամանքից՝ հայկական է, թե՞ պատկանում է որևէ միջազգային ցանցի, ունի իր առանձին ֆինանսական կառավարման համակարգը:

Մակայն, ինչպես ցույց տվեցինք ավելի վաղ, զարգացման կայուն ու դինամիկ տեմպեր գրանցող այս ոլորտում անկասկած անհրաժեշտություն կա ներդնելու ֆինանսական հաշվառման միատարր համակարգ: Վերջինիս կարևորությունը մեծ է հատկապես այս փուլում, քանի որ ֆինանսական վերահսկողության արդյունավետ համակարգի ներդրումը զարգացման սկզբնական շրջանում կապահովի դրա հետագա կայունությունը և ստացված վիճակագրական ու ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը: Մյուս կողմից, միասնական համակարգի ներդրումը Հայաստանում հնարավորություն կընձեռի համադրելի դարձնելու ոլորտի բոլոր ներկայացուցիչների ֆինանսական տվյալները, ունենալու միատարր և ճշգրիտ վիճակագրական ցուցանիշներ, համեմատելու ինչպես առանձին հյուրանոցներ միմյանց հետ, այնպես էլ նույն հյուրանոցի արդյունքները տարբեր ժամանակահատվածներում, գնահատելու տարբեր պատասխանատվության կենտրոնների գործունեության արդյունքները:

Ակնհայտ դարձնելով ոլորտում ընդհանուր ֆինանսական համակարգ ունենալու առավելությունները՝ կարելի է պնդել նաև, որ հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի ներդրումը Հայաստանում ավելի արդյունավետ կլինի, քան զարգացնել և կատարելագործել մեր տեղական ծրագրերն ու համակարգերը: Այն հանգամանքը, որ USALI-ն արդեն գրեթե մեկ դար է՝ կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում, թույլ է տալիս վստահություն հայտնել առ այն, որ նորից հեծանիվ հորինելու փոխարեն պետք է ընդամենն օգտագործել տրված հնարավորությունը: Ուստի, կարծում ենք, որ ոլորտում այս հարցով շահագրգիռ որևէ պետական ներկայացուցչություն պետք է առաջին հերթին ձեռնամուխ լինի հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի ներդրման աշխատանքներին:

Հաշիվների նոր համակարգը ներդնելուն վերաբերող բոլոր վերոնշյալ դրական գործոնների հետ մեկտեղ պետք է հիշել նաև օրենսդրական դաշտի մասին: Այստեղ գաղափարն առաջին հերթին բխվում է հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքին, ըստ որի՝ ՀՀ տարածքում գործում են ֆինանսական հաշվետվությունների միջազ-

գային ստանդարտները (International Financial Reporting Standards - IFRS): Սա նշանակում է, որ կարող են որոշակի հակասություններ առաջանալ ՀՀ օրենսդրության և հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի միջև, քանի որ վերջինս ածանցված է համընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքներին (GAAP), այլ ոչ թե ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (IFRS): Թվում է, թե այս հանգամանքը կարող է լուրջ սպառնալիք լինել USALI-ն ՀՀ-ում ներդնելու հնարավորությանը, սակայն այս հարցի լուծումը նույնպես կարելի է գտնել միջազգային փորձին հետևելով:

Ինչպես նշվել էր ավելի վաղ, հյուրընկալության ոլորտում ֆինանսական կառավարման էտալոնն ամերիկյան մոդելն է: Խոսքը հենց համընդհանուր հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխանող հաշիվների միասնական համակարգի մասին է: Պատահական չէ, որ այսօր նույնիսկ եվրոպական խոշորագույն հյուրանոցային ցանցերը, ինչպիսիք են օրինակ՝ AccorHotels-ը և InterContinental Hotels Group-ը, ձգտում են իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակել հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգին համապատասխան: Ընդ որում հանդիպում են և՛ ամբողջական կիրառում, երբ ֆինանսական հաշվետվություններն ինքնին ներկայացվում են ըստ USALI-ի, և՛ մասնակի կիրառում, երբ ըստ IFRS-ի կազմված ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է դրանց համաձայնեցումը հաշիվների միասնական համակարգին: Մինչդեռ ՀՀ-ում USALI-ի ամբողջական կիրառման համար գուցե անհրաժեշտ լինեն որոշակի օրենսդրական փոփոխություններ, մասնակի կիրառմանն այսօր ոչինչ չի խանգարում: Հիշեցնենք նաև, որ անկախ ֆինանսական հաշվառման նկատմամբ օրենսդրական դաշտի պահանջներից՝ տնտեսվարող սուբյեկտներն ազատ են վարել իրենց կառավարչական հաշվառումը: Հետևաբար՝ առնվազն վերջինս կարելի է իրականացնել ըստ հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի: Այդպիսի հաշվառումն իր հերթին կարող է վեր հանել համակարգի ու օրենսդրության միջև առկա հակասությունները և հող նախապատրաստել նաև ֆինանսական հաշվառման հնարավոր անցման համար:

Ամփոփելով կարելի է ևս մեկ անգամ ընդգծել այն փաստը, որ ՀՀ տնտեսության գերակա ճյուղ համարվող զբոսաշրջության հենասյուներից մեկը՝ հյուրընկալության ոլորտը, անհրաժեշտություն ունի կատարելագործվելու նաև ֆինանսական կառավարման և վերահսկողության տեսանկյունից: Ըստ այդմ հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգի ներդրումն ու կիրառումը ոչ միայն

կօգնեն հյուրանոցների ֆինանսական կառավարման և համադրելիության հարցերում, այլն թույլ կտան պետությանը դինամիկ զարգացում գրանցող այս ոլորտում ունենալ միատարր ու ճշգրիտ ազգային վիճակագրական տվյալներ:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
e-mail: danieliangevorg@gmail.com

Գ. Ա. Դանիելյան

**ՀՀ հյուրընկալության ոլորտում ֆինանսական հաշվառման
միասնական համակարգ ունենալու նախադրյալները**

Զբոսաշրջության զլխավոր ուղղություններից մեկի՝ հյուրընկալության ոլորտի տնտեսական վերելքը պահանջում է նաև ֆինանսական վերահսկողության համակարգում ու բարելավում: Առաջարկվում է հետևել միջազգային փորձին՝ մասնավորապես կիրառելով ամերիկյան հայտնի մոդելը՝ հյուրանոցային ոլորտի համար հաշիվների միասնական համակարգը (USALI): Հոդվածը երևան է հանում այդ համակարգի առավելությունները և քննարկում դրա ներդրման հնարավորությունները ՀՀ-ում:

Г. А. Даниелян

**Предпосылки единой системы финансового учета
для индустрии гостеприимства в Армении**

Рост индустрии гостеприимства – одной из важнейших отраслей туризма требует систематизации и совершенствования финансового контроля. Предложено использовать международный опыт, в частности, американский метод USALI (единая система счетов для гостиничного бизнеса). Выявлены преимущества этой системы и возможности ее внедрения в Армении.

G. A. Danielyan

**Prerequisites of a Uniform System in Financial Accounting
for the Hospitality Industry in Armenia**

The economic growth in hospitality industry, one of the most important branches of tourism, requires a systematized and improved financial control. For this purpose, it is suggested to follow the international experience, in particular: to use the most recognized American method – USALI (Uniform System of Accounts for the Lodging Industry). The article makes evident the advantages of this system and discusses the possibilities of its implementation in Armenia.

Գրականություն

1. UNWTO World Tourism Barometer, <http://marketintelligence.unwto.org/content/unwto-world-tourism-barometer>.
2. ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013-2017 թթ., արտաքին հաստված, armstat.am.
3. ՀՀ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011-2018 թթ., իրական հաստված, armstat.am.
4. Uniform System of Accounts for the Lodging Industry. 11th edition. New York. 2014. P. 8.
5. <https://www.pkfod.com/-/media/ODPKF/Files-and-Images/Insights/Publications/Uniform-System-of-Accounts-for-the-Lodging-Industry.ashx>.
6. The Journal of Hospitality Financial Management. 2015. V. 23. P. 79-89.